ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 203

«21» 02 2024 թ.

Ք. Երևան, Զորափի 40
Հեռ.՝ 53-66-12, ֆաքս՝ 53-92-53

«Ագաստ» ՍՊԸ-ի տնօրեն
Գոհար Մուրադյանին
ՀՎՀՀ՝ 00435781
հասցե՝ ք.Երևան, Տ.Պետրոսյան 31/1
էլ.հասցե՝ agastllc@mail.ru

Հարգելի տիկին Մուրադյան

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 08/01/2024թ. կնքված №ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-24/2-3 պայմանագրի շրջանակներում «Ագաստ» ՍՊԸ-ին 10/01/2024թ-ին պատվեր-հայտ է ներկայացվել №19, 23, 24, 27, 51, 57, 61 չափաբաժինների համար, որից չեն մատակարարվել կամ թերի են մատակարարվել № 24, 27, 57 չափաբաժինները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի: Տեղեկացնում ենք, «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն 2024թ. փետրվարի 21-ին միակողմանի **մասնակի** լուծել է Պայմանագիրը լիարժեք կամ ընդհանրապես չմատակարարված ապրանքների մասով (ներկայացվում է ստորև).

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Հ/Հ 1930066213490100-ին փոխանցել պայմանագրի կատարման գումար՝ 420.000 ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումար՝ 572.730 ՀՀ դրամ, ընդամենը՝ 992.730 ՀՀ դրամ գումարները և վճարված կտրոնները ներկայացնել «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի գնումների բաժին:

չափ. համարը	անվանումը	չափման միավորը	Պայմանագրային քանակը	չմատակարարված ապրանքի քանակը	Չափաբաժնի նախահաշվային գումար	Չմատակարարված ապրանքի նախահաշվային արժեքը	10%	15%	Ընդ
24	Կետորոլակ	հատ	8,000	6,710	800,000	671,000	80,000	100,650	**180,650**
27	Մագնեզիումի սուլֆատ 25% 5մլ	ամպուլա	55,000	48,680	2,200,000	1,947,200	220,000	292,080	**512,080**
57	Ակկու-Չեք Ակտիվ թեստ-երիզներ N 50	հատ	8,000	8,000	1,200,000	1,200,000	120,000	180,000	**300,000**
						ԸՆԴԱՄԵՆԸ	**420,000**	**572,730**	**992,730**

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ